ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻ

<<12>> ապրիլի 2023 թ. քաղաք Մարալիկ

2023 թվականի ապրիլի 23-ին ժամը 12^{00}-ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի մարալիկ քաղաքում, Անիի համայնքապետարանի նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի նորընտիր ավագանու անդրանիկ նիստը:

Նիստին մասնակցում էին՝

<<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ 11 մանդատ ստացած Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված անդամներ՝

1. ԱՐՄԱՆ ՌՈՒԲԻԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍՈՒՐԵՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
3. ՌՈՒԶԱՆՆԱ ԼԻՈՎՆԻԿԻ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ԼՅՈՒԴՎԻԿԻ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ,
5. ԱՐՏԱԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՇԱԲՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԶԱՏԻԿՅԱՆԸ,
7. ԱՆԱՆԻԿ ԴԱՎԻԹԻ ՈՒՌՈՒՄՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԳԵՎՈՐԳԻ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ
9. ԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԳԱԼՍՏՅԱՆԸ
10. ՎԱՉԱԳԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՀԵՊՈՅԱՆԸ,
11. ՄԵՐՐԻ ԱՐՏՅՈՄԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

Նիստին մասնակցում էին Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցները, Անի համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրենները:

Նիստին հրավիրված էին զանգվածային լրատվության միջոցներ, հասարկական կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքի անդամներ:

Համայնքի ավագանու նիստին անհարգելի բացակայում էին՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ 7 մանդատ ստացած, Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված անդամներ՝

1. ԱՐՏԱԿ ՍԱՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,

2. ԱՎԵՏԻՔ ԱՐՏՈՒՇԻ ՆԱԶԱՐՅԱՆԸ,
3. ԿԱՏՅԱ ՋԻՎԱՆԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԸ,
4. ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ՆԻԿՈՅԱՆԸ,
5. ԶԱՎԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ,
6. ՆԱՐԻՆԵ ՄԵԴՐԱԿԻ ՄԿՈՅԱՆԸ,
7. ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ ԱՎԴԱԼՅԱՆԸ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 2 մանդատ ստացած,
Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված անդամներ՝

1. ԱԳՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
2. ԳԱՅԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՅԱՆԸ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ 1 մանդատ ստացած,
Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված անդամ՝

1. ԱՐՄԵՆԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԻ ՆԱԶԱՐՅԱՆԸ:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 1.2-րդ մասի համաձայն, մինչև համայնքի ղեկավարի ընտրվելը, ավագանու նիստը վարում էր ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամ՝ Էդիկ Լյուդվիկի Ռուռուտյանը:

Նիստն արձանագրում էր Անիի համայնքապետարանի աշխատակազմի գործավար՝ Սաթենիկ Սահակյանը:

Մինչև նիստը բացելը, առաջարկվեց մեկ րոպե լռությամբ հարգել 2023 թվականի ապրիլի 11-ին Հայաստանի Հանրապետության սահմանին ադրբեջանական սադրանքի հետևանքով, Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքը անձնվիրաբար պաշտպանելիս զոհված թվով 4 զինծառայողների հիշատակը:

Նիստը վարող՝ Էդիկ Ռուռուտյանը համայնքի ավագանուն տեղեկացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Տեղեկացվեց, որ Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված 21 անդամներից համայնքի ավագանու անդրանիկ նիստին մանակցում են 11-ը, այսինքն քվորումն ապահովված է:

Անի համայնքի նորընտիր ավագանու անդրանիկ նիստը հայտարարվեց բացված, հնչեց Հայաստանի Հանրապետության պետական Օրհներգը:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց, որ Թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 2-ի «Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվականի մարտի 26-ի ընտրությունների արդյունքներով Անի համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 12-Ա որոշման և 2023 թվականի ապրիլի 6-ի <<Շիրակի մարզի Անի

համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին>> N 12 արձանագրության համաձայն, Շիրակի մարզի Անի համայնքում 2023 թվականի մարտի 26-ին կայացած ընտրությունների արդյունքներով Անի համայնքի ավագանին համարվել է ընտրված, մանդատները բաշխվել և Անի համայնքի ավագանու ընտրված անդամներ են գրանցվել՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ՝ 7 մանդատ.

Անի համայնքի ավագանու ընտրված անդամներ են գրանցվել՝

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ ՍԱՎԵԼԻ,
2. ՆԱԶԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՔ ԱՐՏՈՒՇԻ,
3. ՆԱԽՇՔԱՐՅԱՆ ԿԱՏՅԱ ՋԻՎԱՆԻ,
4. ՆԻԿՈՅԱՆ ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ,
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ,
6. ՄԿՈՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿԻ,
7. ԱՎԴԱԼՅԱՆ ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ 2 մանդատ.

Անի համայնքի ավագանու ընտրված անդամներ են գրանցվել՝

1. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ
2. ԱՎԵՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ 1 մանդատ,

Անի համայնքի ավագանու ընտրված անդամ է գրանցվել՝

1. ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԻ

<<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ 11 մանդատ,

Անի համայնքի ավագանու ընտրված անդամ են գրանցվել՝

1. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԱՆ ՌՈՒԲԻԿԻ
2. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԷԴԳԱՐ ՍՈՒՐԵՆԻ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ԼԻՈՎՆԻԿԻ
4. ՈՒՌՈՒՏՅԱՆ ԷԴԻԿ ԼՅՈՒԴՎԻԿԻ
5. ՇԱԲՈՅԱՆ ԱՐՏԱԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ
6. ՋԱՏԻԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՎՈԼՈԴՅԱՅԻ
7. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՆԱՆԻԿ ԴԱՎԻԹԻ
8. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԳՈՌ ԳԵՎՈՐԳԻ
9. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ
10. ՀԵՊՈՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ ԳԵՎՈՐԳԻ
11. ԵՆՈՔՅԱՆ ՄԵՐՐԻ ԱՐՏՅՈՄԻ:

Զեկուցողը շնորհավորեց ընտրված ավագանու անդամներին, ցանկացավ քաջ առողջություն և բեղնավոր աշխատանք՝ ի բարօրություն Անեցիների: Համոզմունք հայտնեց, որ համայնքի ավագանու գործունեությունը հիմնված կլինի քաղաքական բազմակարծության,

իրավահավասարության, օրինականության, հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքի վրա՝ ի շահ համայնքի բնակչության:

Զեկուցողը ներկայացրեց Անի համայնքի նորընտիր ավագանու անդրանիկ նիստի օրակարգի նախագիծը.

Օրակարգի նախագիծ-1

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի նորընտիր ավագանու 2023 թվականի ապրիլի 12-ի առաջին նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի ընտրության մասին (արձանագրային).

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին.

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրը սահմանելու մասին.

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

Ինչպիսի առաջարկություններ կան ավագանու նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ:

Առաջարկություններ դիտողություններ չեն ներկայացվել:

Հիշեցնեմ, որ որոշումը ընդունվում է նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

Առաջարկություն կա հաստատել ավագանու նիստի օրակարգը:

Խնդրում եմ քվեարկել, որքեր են կողմ, դեմ, ձեռնպահ:

Հարգելի գործընկերներ, ավագանու նիստի օրակարգը ձայների հետևյալ համամասնությամբ հաստատված է /Կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և 69-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 2-ի «Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվականի մարտի 26-ի ընտրությունների արդյունքներով Անի համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 12-Ա որոշումը և 2023 թվականի ապրիլի 6-ի << Շիրակի մարզի Անի համայնքի

ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին>> N 12 արձանագրությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի նորընտիր ավագանու 2023 թվականի ապրիլի 12-ի առաջին նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի նորընտիր ավագանու 2023 թվականի ապրիլի 12-ի առաջին նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի ընտրության մասին (արձանագրային).

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին.

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրը սահմանելու մասին.

((Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հարգելի գործընկերներ, անցնում ենք օրակարգի հաջորդ հարցի քննարկմանը:

<u>Օրակարգ-2:</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի ընտրության մասին (արձանագրային).

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրքի /Սահմանադրական օրենքի/ 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե համայնքի ավագանու ընտրության արդյունքով ընտրությանը մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքից) մեկն ստանում է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձն օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար:

Թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 2-ի «Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվականի մարտի 26-ի ընտրությունների արդյունքներով Անի համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 12-Ա որոշման և 2023 թվականի ապրիլի 6-ի <<Շիրակի

մարզի Անի համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին>> N 12
արձանագրության համաձայն <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցությունը ստացել է
ավագանու անդամների տեղերի 52.49 տոկոսը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

արձանագրում է.

Համաձայն Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրքի /Սահմանադրական օրենքի/ 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի, օրենքի ուժով Արման Ռուբիկի Սարիբեկյանը համարվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ընտրված ղեկավար:

Զեկուցողը շնորհավորեց պարոն Արման Սարիբեկյանին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պատասխանատու պաշտոնը ստանձնելու կապակցությամբ, ցանկացավ բեղնավոր և արդյունավետ աշխատանք համայնքի կայուն զարգացումն ապահովելու պատասխանատու աշխատանքում:

Արման Սարիբեկյանը հանդես եկավ շնորհակալական ելույթով և իր պատրաստակամությունը հայտնեց՝ պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն Անի համայնքի բնակիչների:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգի-3:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒռուտյան)

Զեկուցողը նշեց, որ ավագանու անդամներին են բաժանված համայնքի ավագանու կանոնակարգի նախագիծը:

Առաջարկվեց ծանոթանալ, քննարկել և առաջարկությունների ու դիտողությունների առկայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Առաջարկություններ ներկայացվեցին ընդունել համայնքի ավագանու կանոնակարգը:

Առաջարկվեց քվեարկել, որքեր են կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը նշեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունված է /Կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի13-րդ հոդվածի 2-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին

կետի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու կանոնակարգը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու կանոնակարգը կցվում է արձանահրությանը:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգի-4:

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին.

Զեկուցողը նշեց, որ ավագանու անդամներին են բաժանված համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Առաջարկվեց ծանոթանալ, քննարկել և առաջարկությունների ու դիտողությունների առկայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Առաջարկություններ ներկայացվեցին ընդունել համայնքի ավագանու որոշումը:

Առաջարկվեց քվեարկել, որքեր են կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը նշեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու որոշումն ընդունված է /Կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի օրենքի 74-րդ հոդվածի առաջին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու կանոնակարգի 4.6-րդ կետը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի երդման արարողությունն անցկացնել 2023 թվականի ապրիլի 15-ին ժամը 12:00-ին, Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մաղաթյան փողոց թիվ 1 հասցեում:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի երդման արարողությանը հրավիրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչների, կրթության, գիտության մշակութի գործիչների, հասարակական և լրատվական կազմակերպությունների ներկայացուցիչների:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգի-5:

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրը սահմանելու մասին.

(Զեկուցող՝ ավագանու տարիքով ավագ անդամ Էդիկ ՈՒՌՈՒՏՅԱՆ)

Հարգելի գործընկերներ Ձեզ բաժանված են համայնքի ավագանու որաշման նախագիծը:

Խնդրում եմ քննարկել, առաջարկությունների և դտողությունների առակայության դեպքու ներկայացնել առաջարկություն:

Առաջարկություն կա հաստատել նախագիծը:

Խնդրում եմ քվեարկել, որքեր են կողմ , դեմ , ձեռնպահ:

Հարգելի գործընկերներ, նախագիծը ձայների հետևյալ համամասնությամբ ընդունված է /կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0/:

Զեկուցողը ամփոփելով համայնքի ավագանու նիստը, շնորհակալություն հայտնեց մասնակցության համար, հայտարարեց, որ օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ- 11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
ՀԱՍՄԻԿ ԶԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
ԱՆԱՆԻԿ ՈՒՌՈՒՄՅԱՆ	----------	----------	----------
ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
ԱՆՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ	----------	----------	----------
ՎԱՉԱԳԱՆ ՀԵՊՈՅԱՆ	----------	----------	----------
ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝

ՍԱԹԵՆԻԿ
ՍԱՀԱԿՅԱՆ

<<12>> ապրիլի 2023 թվական